ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» հունիսի 2025թ. №**496**

«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով, 2-րդ մասով՝ հաշվի առնելով, որ Սպիտակի համայնքապետարանի կողմից հայտարարված՝ «ՀՀ ԼՄՍՀ-ԷԱՃԾՁԲ-25/10» ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող ճանաչված մասնակիցը՝ «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, չի ստորագրել պայմանագիրը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչով պայմանավորված գնահատող հանձնաժողովը 2025 թվականի հունիսի 2-ի N 3 որոշմամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի, 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, «ՀՀ ԼՄՍՀ-ԷԱՃԾՁԲ-25/10» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ ***որոշում եմ.***

1. «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով դիմել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հունիսի 2
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

«02» հունիսի 2025թ.. № ***034/21-*** 1687

«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ
(էլ. հասցե՝ sopranoarm@gmail.com)

Հարգելի պարոն Դանիելյան,

Ձեզ եմ ներկայացնում Սպիտակ համայնքի ղեկավարի՝2025թ. հունիսի 2-ի № 496 որոշման «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» որոշման և ՀՀ Ֆինանսների նախարարին ուղղված գրության պատճենները:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	Գործունեության հասցեն	Մասնակցի գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	08287363	ԿԻԵՎՅԱՆ Փ. / Շ / 8 / 62 ԲՆ. ԱՐԱԲԿԻՐ 0028,			«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ կետի «բ» ենթակետ	ՀՀ ԼՄՍՀ-ԷԱՃԾՁԲ-25/10 02.06.2025թ.